

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԵՑ ԽՆՈՒՍԵՑՈՒ «ԲԱՆԱԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԿՈՆԻԲԵՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պարույր Սահակյան

Անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիքերը թողել է հարուստ հայագիտական - բանասիրական ժառանգություն: Կոնիքերի հայագիտական հետաքրքրությունների շրջանակը չափազանց լայն էր: Նրան հետաքրքրել են հայ իմաստասերները, հույն նշանավոր փիլիսոփաների՝ Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրի, Փիլոն Երբայեցու աշխատությունների հայերեն թարգմանությունները, 7-րդ դարի նշանավոր մաթեմատիկոս, տիեզերագետ, մատենագիր Անանիա Շիրակացու երկերը, Մովսես Խորենացու,¹ Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու աշխատությունները, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Օճնեցու, Ներսես Շնորհալու մատենագրական երկերը, Խիկար Իմաստունի պատմության և խրատների հայերեն թարգմանությունը,² հայոց եկեղեցու պաշտամունքային և ծիսական կարգին վերաբերող գործերը:

Հայոց եկեղեցու նոր պավլիկյան աղանդի պաշտամունքային և ծիսական կարգին է նվիրված 18-րդ դարի հայ հոգևորական Հովհաննես Երեց Խնուսեցու «Բանալի ճշմարտութեան» երկի հայերեն (գրաբար) և անգլերեն հրապարակումները. բնագրի թարգմանիչն ու հրատարակիչն էր Ֆ. Կոնիքերը (1898):

«Բանալի ճշմարտութեան» գիրքը գրվել է 1782-ին Տարոն գավառում: Շատ հետաքրքիր ու արժեքավոր է ոչ միայն ողջ գիրքը, այլև նրա առաջաբանն ու վերջում կցված հիշատակարանը: Ֆ. Կոնիքերը այս աշխատությունը հրատարակել է մի ձեռագրի օրինակից, որն ունեցել է պակասող հատվածներ և ջնջված մասեր: Նա փաստորեն գրաբարով հրատարակում է Հովհաննես Երեցի՝ իր կողմից որոշ չափով ճշգրտված և լայնորեն գիտականորեն ծանոթագրված բնագիրը:³

«Բանալի ճշմարտութեան» աշխատության նպատակը պարզաբանված է նրա «Բան առ սիրելի ընթերցողսդ» հատվածում: Հեղինակը խոստովանում է այն դժվարությունը, որը հաղթահարել է ինքը նման պատասխանատու գործ գրելու համար. «Թեպետ բազմութիւնք ըսբաղանցս և փորձութիւնք ալէկոծմանց աշխարհի և յոգնադիմի պարաւանդութիւնք յոյժ առ զանազան մարկութիւնս անցաւոր կենցաղոյս կարի վերակացեալք ի վերա մեր, ոչ մերէին մեզ բոռն արկանել զայսմանէ հարկատր գործոյ»:⁴ Սակայն ներշնչված աստվածային գաղափարներով, հայ եկեղեցու շահերի թելադրանքով և համահայկական ընդհանրական կյանքի առողջացման համար նա կատարում է Բրիստոսի ավետարանաճիւղի պատվերները: Բրիստոնյա ժողովրդի ամեն անհատ, ամեն ընտանիք

1). Ֆ. Կոնիքերը բազմաթիվ փաստերով ասպարեցել է, որ հայերի պատմահայրը անպայմանորեն հինգերորդ դարի պատմիչ է (Տե՛ս F.C. Conybeare M.A., The date of Moses of Khoren, p. 489-504): Թարգմանաբար լույս է տեսել՝ Կոնիքեր Ֆ., Մովսես Խորենացու Պատմութեան աղբերաց խնդիրը, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1902, հուլիս, օգոստոս: Տես նաև Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բնական բնագիրը և ներածութիւնը Մ.Ա. քեղյանի և Ս.Հարությունյանի, Տիֆլիս, 1913, էջ ԾԸ, Ե.Գ. Տեր - Սիմասյան, Պատմա - բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 313-314, Գ.Մարգարյան, Հեղինակական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 8-11 և այլուր:

2). Խիկար Իմաստունի խրատների Ֆ. Կոնիքերի գրաբարյան և բնագրից կատարած անգլերեն թարգմանության մասին տես՝ «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստունոյ», աշխատասիրությանը Ա.Մարտիրոսյանի, գիրք 1, Երևան, 1969, գիրք 2, Երևան 1972:

3). Ֆ. Կոնիքերը գրաբար լեզուն իմացել է կատարյալ: Այդ են վկայում նրա հայագիտական գործերը: Նրա անձի և գործունեության մասին հիմնադրու, բայց խիստ դիպուկ բնութագրում ունի Ղևոնդ Ալիշանը, «Շատ ավելի հռչակված է մեր մեջ անգլյացի հայագետ Կոնիքերի անունը՝ Օքսֆորդի համալսարանի ուսուցչապետի, ուսումնասիրության նյութ ընտրեց ոչ Խորենացին, ոչ Ագաթանգեղոսը, ոչ էլ Բուզանդը» (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Ֆ. Կոնիքերը զբաղվել է Ղ. Ալիշանի այս բնութագրականից հետո, երբ արդեն վաստակաշատ ու համբավավոր հայագետ էր (Պ.Ս.) նրանց մասին չկա հայագետ, որ մի քանի էջ գրած չլինի: Նա ընտրեց Փիլոնի հատվածաբար հասած կամ կորած գրվածքները, Պլատոնի գրվածքների հին հայկական թարգմանությունները, Արիստոտելի և Պորփյուրի իմաստասիրական թարգմանությունը, որոնք համեմատեց Դավիթ Անհաղթի գրվածքների հետ: Բոլորովին անմշակ հոդ էր, որ ինքը մշակեց: Արագ և տոկուն աշխատող էր, հայերեն ձեռագրերի ընթերցման մեջ վարժ, նրա համար ընտանի էր Եղիշեի և Դավիթ Անհաղթի լեզուն: Եղավ բազմիցս Վենետիկում, այցելեց Վիեննա, Էջմիածին, Երուսաղեմ, հայ հոգևորականներին տրամադրեց նյութական օգնություն: (Տե՛ս Որբունի, Պատկերազարդ Բազմավեպ Վենետիկ, 1900, էջ 16):

4). The Armenian text, Գիրք որ կոչի «Բանալի ճշմարտութեան», էջ 1:

պետք է ապրի և գոյատևի Աստծու որդու պատվիրանների համեմատ և չշեղվի նրանից: Նախ պետք է անվերապահ հավատա Հիսուս Բրիստոսին, մկրտվի ըստ նրա հրահանգների և ապահովվի իր մշտնջենական կյանքը, որովհետև «..... և որ ոչն հաւատասցէ՝ դատապարտեսցի»:⁵ Հովհաննես Երեցը «Բանալի ճշմարտութեան» գործի առաջաբանում խոստովանում է, թե իր աշխատությունը շարադրելիս ստացել է երկնային հոր ներշնչումը, սակայն գրել է «համառոտաբար և ոչ ճոխաբար»:

Հովհաննես Երեցի այս գործի գրաբար հիշատակարանում Ֆ. Կոնիքերը ցավով նշում է, ձեռագրի պակասավոր և ջնջված տեղեր ունենալու փաստը. «Եւ յոյժ տրտմեցայ ես զի անչափ թերթք բնագրին անկեալ եղել ոմանց չնորոգութեամբ և մանաւանդ զի չկարացի գտանել, ևս տպագրելոյ զխորհրդարանն եկեղեցոյն այնորիկ ընդհանրականին իւրոյին, զորմէ զրիչն բնագրին զեկոյց ի յիշատակարանին: Վասն որոյ յընթեռնուլն ձեր զմատեանս, եթէ գտանիցի որ օրինակ մի ամբողջ և լիակատար գրոցս այսոցիկ, ասեմ զբանալոյն և զխորհրդարանին, խնդրեմ և յոյժ աղաչեմ զձեզ զի զսոսա առ իս յոտարկեսջիք, զի ևս տպագրիցին յաւելուածք այսոցիկ հարկատրագոյնք մատենի մերոյ»:⁶

Ֆ. Կոնիքերը երբեմն հմտորեն վերականգնում է «Բանալի ճշմարտութեան» երկի որոշ ջնջված հատվածները, ինչպես, օրինակ, առաջաբանին կցված չափածոյի վերջամասերը.

Ձայս համառօտ բանս քննե [ցեք],
Խորին մտօք որոնե [ցեք],
Եթէ հաճոյ լիցի ձեզ [բանն],
Յայնժամ զարդիջիք ընդ որոտ [մանն]:⁷

Ինչպես նկատել է Ֆ. Կոնիքերը Հովհաննես Երեցի այս երկի հիշատակարանը ևս պակասավոր է: Նա հիշատակարանի համապատասխան հատվածում գրաբարով տողատակում ավելացրել է հետևյալ նկատումը. «Աստանօր թերթ մի կամ քանի մը անկեալ»:⁸ Հովհաննես Երեց Խնուսեցու այս հիշատակարանն իր հերթին ունի ճանաչողական մեծ արժեք: Նախ՝ այն ներկայացնում է ձեռագրական հարուստ ավանդույթներ ունեցող հայ գրչագրության վիճակը 18-րդ դարի վերջին քառորդում, այն ժամանակ, երբ հայերն իրենց տպարաններն ունեին արդեն աշխարհի տարբեր երկրներում: Երկրորդ՝ ձեռագրական մշակույթը շարունակում էր իր ընթացքը թղթի վրա և մատենագիրներին խիստ մտահոգում էր իրենց երկի հետագա ճակատագիրը՝ արտագրության եղանակով բազմացվելու դեպքում:

Այս իրողությունը հատկապես կարևոր էր Հովհաննես Երեցի երկի պարագայում, որովհետև, ինչպես ինքն է նկատում առաջաբանում, գրվածքը որոշակիորեն ուղղված է համայն հայությանը, իսկ սա նշանակում էր նախ բուն Հայաստանը, այլև նաև հայ գաղթօջախները, որոնք իրենց հայ քրիստոնյայի կյանքով շարունակում էին ապրել Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում: Հովհաննես Երեցի հիշատակարանի պահպանված մասում հեղինակը միջնադարյան մատենագրական հոգեբանությանը խիստ հարազատ մնալով՝ խոստովանում է, թե կարող են ինչ - ինչ թերություններ լինել իր շարադրանքի մեջ, «Նա ևս երես անկեալ ջերմ սիրով և հաւատով խնդրեմ ի ձեռք, զի դուք զթերութիւն, զպակասութիւն և զսղալմունս շարադրութեան կամ քերթողութեան, այլ ևս թէ զվանկից, թէ զգրոց, թէ զբառից և թէ զբանից և եթէ զուրք մասանց արիես-տին»:⁹ Սակայն անմիջապես ավելացնում է, թե այդ բնութայնությունները գուցե իր գործի մեջ մտել են անվարժ գրիչների պատճառով. «Եթէ ի մոցանէ զսղալումն և զպակասութիւն ինչ գտանիջէք, ոչ եթէ ի մէնջ եղեալ է, այլ անվարժ գրչաց գոյով ի սմա մտեալ է»:¹⁰

Գրչաբարյան բնագրի տպագրության մեջ հայագետը տողատակում մատնացույց է անում պակասող հատվածները, երբեմն ուղղում սխալ ձեռագրական գրությունը, նշում նույն բառի նույն ձեռագրում եղած տարբերակները՝ հաճախ դնելով իր ենթադրած տարբերակները:

Ելնելով Հովհաննես Երեցի հիշատակարանից՝ կարող ենք ասել, որ բնագրում եղել են չափածո հատվածներ, որոնք հեղինակը գրել է ավետարանական համապատասխան հատվածների ներշնչմամբ:

ԺԹ գլխում խոսք է գնում մկրտության կարևոր նշանակության մասին: Պատմում է Հիսուս

- 5). Նույն տեղում, էջ 4:
- 6). Նույն տեղում, էջ 65:
- 7). Նույն տեղում, էջ 2:
- 8). Նույն տեղում, էջ 64:
- 9). Նույն տեղում:
- 10). Նույն տեղում, էջ 64-65:

Քրիստոսի նշանավոր հետնորդների՝ առաքյալներ Պետրոսի և Պողոսի, Մարիամ Մագդաղենացու, Միմնի գաղանչի և նմանների մասին, «զի տքա մեծաւ գղջմամբ ընկալան զփառս և զպատիւս Յիսուսէ Քրիստոսէ փրկչէն մերմէ, որպէս յայլէ ի սուրբ աւետարանն և կամ ի գործս առաքելոցն սրբոց և այլն»։¹¹ Այս հատվածին կցված է եղել բանաստեղծական հատված, որն ըստ Ֆ. Կոմիքերի խիստ պակասավոր է, որոհետև ինչպես նա է նկատել. «աստանօր թերթք երկու անկեալ» (երեսք՝ 74-77)։¹² Այդ հատվածի պահպանված մասն է.

Եկա՞յք որդիք Նոր Միօնի
Առէ՛ Ղք զպսակն տեառն Յիսուսի,
Պահէ՛ք ի ձեզ, զոր ինչ խօսի,
Դասի՛ք ի դասս յաջակողմի,
Եթէ լսէք եկեղեցւոյն
Փրկէ զձեզ Աստուած անհուն։¹³

Հովհաննես Երեցի «Բանալի ճշմարտութեան» երկի բոլոր լուսանցքներում կան համապատասխան նշումներ, թե հեղինակը տվյալ հատվածի բովանդակությունը քրիստոնեական կրոնի համար սրբազան համարված գրքերի որ հատվածից է քաղել։ Նշված են Մաթևոսի, Մարկոսի և Հովհաննեսի Ավետարանների առանձին հատվածները, Հին կտակարանի Ծննդոց և Ելից գրքերը։ Պողոս առաքյալի որոշ թղթեր (ինչպես փիլիպեցիներին և եբրայեցիներին ուղղվածները)։

Լուսանցքներում տրված են նաև, քրիստոնեական որոշ խորհրդանիշերի բացատրություններ։ Օրինակ՝ «Փեսայն որ է Քրիստոս Յիսուս և հարսն՝ սուրբ եկեղեցի ընդհանրական»։¹⁴

Հովհաննես Երեցի այս գրվածքից երևում է մի խոր մտահոգություն։ Նա ցանկանում է հայ եկեղեցու հավատացյալներին դարձնել «Բանալի ճշմարտութեան» ուսմունքի հետևորդներ։ Սա արդեն լուրջ վտանգ էր հայ պաշտոնական եկեղեցու համար։ Հայ եկեղեցին երբեմն կորցրել է իր հավատացյալներին, ազգային միախմբան համար այս վտանգավոր փաստը՝ աղանդին հետևելը, կարևոր էր ավելի քան, որովհետև չկար հայկական պետականությունը, և ազգային միաբանության գերխնդիրը իր վրա էր վերցրել հայոց եկեղեցին, որի մարմնավորողները հայրենասեր և իրենց կոչմանը ծառայող հոգևոր անձնակերպ անհատներ էին։ Ֆ. Կոմիքերը հիմնալի գիտեր հայ դավանաբանական գրականությունը, հատկապես այն մատենագիրների երկերը, որոնք պայքարում էին պաշտոնական եկեղեցու գաղափարախոսությունը չընդունող աղանդավորների դեմ։ Այդ հավատի մաքրության մարտիկ՝ հոգևորականները շատ – շատ են եղել ողջ միջնադարում։ Այդ է պատճառը, որ հայագետը Հովհաննես Երեց Խնուսեցու «Բանալի ճշմարտութեան» երկի անգլերեն թարգմանությանը կցել է Հովհաննես Օձնեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու՝ աղանդավորականության դեմ ուղղված երկերն ու թղթերը։ Այդ թղթերի բովանդակության ծանոթությունը երևան է բերում նախորդների մտահոգությունների պատճառները։ «Բանալի ճշմարտութեան» երկի երկրորդ գլուխը խորագրված է. «Վասն սուրբ Մկրտության, Յաղագս տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի, թե որպէս կանոն և պատուէր ետ այնպէս առնենք Աստուծով»։ Հովհաննես Երեցը նշում է Ղուկասի Ավետարանի այն հատվածը,¹⁵ որը նկարագրում է Հիսուսի մկրտությունը։ Ողջ ժողովուրդը մկրտվում է, երբ Հիսուսն էլ է մկրտվում, աղոթում է, և երկինքը բացվում է։ Սուրբ հոգին, մարմնավորված որպես աղավնի, իջնում է նրա վրա, և երկնքից ձայն է գալիս, որ ասում էր, թե Հիսուսը իր սիրելի որդին է։

Ինչպես վկայում են աղանդավորության երևույթը մերկացնող թղթերը, հերձվածողները չեն ընդունել եկեղեցու ծիսակարգը, այդ թվում նաև մկրտությունը։ Հովհաննես Հովհաննես Օձնեցին, որը 717 – 728 թթ. եղել է հայոց կաթողիկոսը, գրել է մի աշխատություն՝ «Ընդդէմ պատիկեանց» վերնագրով։¹⁶ Պավլոսյաններից հետո մնալու խիստ պատվիրաններ ենք տեսնում նաև նույն հեղինակի կանոններում։¹⁷ Հոգևոր առաջնորդը պավլիկյաններին անվանում է չարաղանդ մծղեականներ, որոնցից պետք է խորշել, օթևանելու տեղ չտալ, չգրուցել նրանց հետ, զարշել նրանցից, որովհետև նրանք սատանայի որդիներ են, հավիտենական հուրի լուցկիներ, որ բոլորովին

11). Նույն տեղում, էջ 26։

12). Նույն տեղում, էջ 27։

13). Նույն տեղում։

14). Նույն տեղում, էջ 23։

15). Ղուկաս, 3, 21, 22։

16). Տես Հովհաննես Օձնեցի, Մատենագրություն, Վենետիկ, 1833։

17). Հովհաննես Օձնեցի, Մատենագրություն, էջ 24 – 33։

հեռացել են Արարչին սիրելու կամեցողությունից։ Եվ եթե մեկը հարի նրանց, սիրալիրություն և բարեկամություն անի նրանց հետ, պետք է այդպիսիներին խոշտանգել և ծանր պատիժների ենթարկել։

Գրիգոր Մագիստրոսը Կէ թղթում մերկայացնում է, թե ինչպես են պավլիկյանները, որոնք Ավետարանը և Առաքյալների գրքերը անգիր գիտեն, մերժում մկրտությունը՝ այն անվանելով՝ մահ։¹⁸

Աղանդավորականության մասնավորապես թոնդրական շարժման դեմ է ուղղված Գրիգոր Նարեկացու թուղթը։ Տեղին է նկատել նարեկացիագետ Պողոս Խաչատրյանը, թե այդ թուղթը Գրիգոր Նարեկացու անկեղծ վրդովմունքի արտահայտությունն է «... Թղթի անկողմնակալ ընթերցումը բերում է այլ համոզման։ Նարեկացու բռնկումն ու զայրույթը Սմբատ Չարեհավանցու և նրա հետնորդների դեմ այնքան անմիջական են, որ բռնազբոսիկ կլինեն մտածել, թե նա ընդունել է շինծու կեցվածք՝ վարագուրելու համար իր էությունն ու հայացքները»։¹⁹ Իր թղթի մեջ Գ. Նարեկացին թոնդրակեցիների պարագլխին՝ Սմբատ Չարեհավանցուն, որակում է ամենախիստ խոսքերով՝ նրան ուղղելով բազում անեծքներ և նզովքներ. «... նզովս բազմապատիկս ոչ արձանացուցէք սկզբնահաւրն նոցա Սմբատայ և մեռելոց նոցա և կախարդական կրամից նոցա և դաւանութեան նոցա...»։²⁰

Քրիստոնեական ճշմարիտ հավատը հայ ժողովրդի մեջ խորապես ամրացելու համար գրվել են մեկնաբանական բազմաթիվ աշխատություններ, որոնց նպատակն է եղել մատչելի դարձնել Հին և Նոր կտակարանների յուրացումը։ Անգամ այդպիսի աշխատություններ գրվել են ոչ քրիստոնեական միջավայրում՝ մահմեդականության մեջ եղած քրիստոնյաների համար, իրենց ազգի մերկայացուցիչների կողմից։ Դրա լավագույն օրինակը Խալիլ Ջիպրանի «Մարգարեն» խիստ ուշագրավ աշխատությունն է, որ միջազգային տարածում ունի։²¹

Հովհաննես Երեց Խնուսեցու «Բանալի ճշմարտութեան» աշխատությունը բաժանվում է բազմաթիվ գլուխների մեջ։ Դրանք համարակալված են մինչև 22 -րդ գլուխը (ԴԲ),²² դրանից հետո, գլուխների համարների փոխարեն դրված են հարցական նշաններ։ Որոշ գլուխներում կան ծիսական գործնական ցուցումներ։

Այսպես, օրինակ, «Եւ յետ ընթեռնոյն Պողոսի պարտ է ընտրելոյն հարցանել զանուն Երեխային, թէ զինչ կամիք կոչել զանուն երեխային այս ըստ օրինի և ոչ առասպել։ Եւ ապա ընթեռնու զսուրբ Աւետարանն. Ղուկաս, գլուխ 2, հմր 21»։²³ Ղուկասի Ավետարանի համապատասխան հատվածում ասվում է, թե երբ ութ օրերը լրացան, մանկանը տարան թլպատելու։ Նրա անունը Հիսուս դրին, որպես կոչվել էր հրեշտակի կողմից՝ դեռ մոր որովայնում չհղիացած ժամանակ։

Միջնադարյան գրականությանը հատուկ գեղարվեստական հնարանքներն առկա են «Բանալի ճշմարտութեան» երկում։ Նրա պոետիկան լայնորեն կապվում է Աստվածաշնչի գեղարվեստական հնարանքների հետ։ Ինչպես Հին և Նոր կտակարաններում, այնպես էլ Հովհաննես Երեցի երկում տեղ է տրված հարց ու պատասխանի տրամախոսական ձևին։²⁴

Դրա լավագույն ասպացույցն է հետևյալ երկու հատվածների համառոտ մեջբերումը.

Յաղագս քրիստոնեականի վարդապետութեան*

«Հարց. Դու քրիստոնեայ ես»։

Պատասխանի. Այո՛, ես քրիստոնեայ եմ։

18). Գրիգոր Մագիստրոս, Գիրք թղթոց, Ալեքսանդրապոլ, 1910, թուղթ Կէ։

19). Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 99։

20). Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 507։

21). Տես Խալիլ Ջիպրան, Մարգարեն, հայացուց՝ Գերեզին-արքեսպա Գազանճյան, Իսթանբուլ, 1992։

22). Եւ յաղագս խրատոյ ձեռնադրութեան, ԳԼՈՒԽ ԴԲ (Տես The Armenian Text, էջ 38)։

23). Նույն տեղում, էջ 24։ Կոմիքերի բնագրում Ղուկասը տեխնիկական սխալի պատճառով տպագրված է Լուկաս (Պ.Ս.)։

24). Միջնադարյան գրականությունից մեզ են հասել հարց ու պատասխանի մի շարք ժողովածուներ, որոնք իրենց բովանդակության մեջ պարունակել են Աստվածաշնչի մոտիվները. «Հնում հարցմունքի ձևով կառուցված ստեղծագործությունները մեծ կիրառում ունեին թե արևելյան և թե եվրոպական գրականության մեջ, որպես դուրըմբռնելի միջոց, որ հիմնականում հետապնդում էր ճանաչողական, խրատաուսուցողական նպատակ։ Ռուս գրականության մեջ ևս նման գործերը հայտնի էին որպես Հարցմունք կամ Գիրք Հարցմանց «Книга Вопросов»։ Ամենուր դրանք պարունակում էին համառոտ հանրագիտական տեղեկություններ, որ պարտադիր էր իմանալ ուսյալ մարդուն»։ (Տես Պատմություն վասն մանկան և աղջկան, Պատմություն յաղագս Փանիով թագաւորին, աշխատասիրութեամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1988, էջ 11)։

*ՈՒղղագրությունը պահել ենք Կոմիքերինը։

Հ.Քրիստոնեայ ասելն զի՞նչ ասել է:

Պ.Այն ասել է, որ գտերն մեր Յիսուս Քրիստոս ճանաչե, թե զինչ է զպատուիրան նորա պահե:

Հ.Ձի՞նչ է պատուիրան և հրաման տեսնո՞ւմ մերոյ Յիսուս Քրիստոսի զոր պահեմք:

Պ. Այն է զոր տերն մեր պատուիրեաց աշկերտաց և հաւատացելոց իւրոց ասելով՝ Ձի եթէ սիրեսցիք զիս, զպատուիրանս իմ պահեսցիք: Որպէս և ես զպատուիրանս հօրն իմոյ պահեցի:

Հ. Բանի՞ք են պատուիրանք տեսնո՞ւմ մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Պ. Թէ այսքան են. Նախ յուսումն, երկրորդ ապաշխարութիւն, երրորդ հաւատ, չորրորդ մկրտութիւն, հինգերորդ հաղորդութիւն, և վեցերորդ սէր որ է զլուսն ամենեցուն:

Հ. Թէ զի՞նչ է Քրիստոս և կամ որպիսի պարտեմք զնա ճանաչել և հաւատալ:

Պ. Պարտեմք զի որպէս ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցին հաւատաց և մեզ հարկ է այնպէս հաւատալ:

Հ. Որպէ՞ս հաւատացին երանելի առաքեալքն, ուսո՞յ մեզ:

Պ. Որպէս սուրբ Յովնանն աւետարանիչն յայտնէ ասելով թէ մեր հաւատացաք և ծանեաք թէ դու ես Քրիստոս որդին աստուծոյ որ աշխարհս գալոց էիր:

Պ. Այդ և նոքա որք զերեխայսն մկրտեն մկրտութիւնն նոցա ճշմարի՞տ է և թէ ունայն:

Պ. Թէ են ունայն և խաբէութիւն. քանզի երեխայքն ոչ Պօղոս առ ունին զապաշխարութիւն, ոչ ունին զյուսումն և ոչ ունին եփրայեց. զհաւատս սուրբ. վասն այնորիկ ո՛չ է ճշմարիտ մկրտութիւն զլ. 5, նոցա և ո՛չ փրկութիւն:

Հ. Ապա որո՞ց է արժան սուրբ մկրտութիւն և հաղորդութիւն:

Պ. Նոցա է յարժան սուրբ մկրտութիւն և հաղորդութիւն, որք ունին զմեզս ըսկզբնական և ներգործական»:²⁵

Նույնատիպ հարց ու պատասխան կա նաև «Բանալի ճշմարտութեան» երկի վերջին հատվածներում «Յաղագս միոյ դատաստանի և ոչ երկու» գլխում.

«Հարց. Բանի՞ք են դատաստան Աստուծոյ վասն մեռելոց և կենդանեաց:

Պատասխանի. Թէ է մի միայն դատաստան և ո՛չ երկու:

Հ. Ապա թէ մի՞ է դատաստանն աստուծոյ զոր Քրիստոսիւն առնէ, ապա ընդէ՞ր ոմանք ուրացողք ասեն թէ երկու են դատաստանք և ոչ մի. զմիւսն առանձնական ասեն և զմիւսն ընդհանրական:

Պ. Վասն այնորիկ ասեն և սուտ խօսին զի հայրն նոցա սատանայ է. որպէս և տերն մեր ասէ, զի որ սուտ խօսի իւրոց անտի խօսի և հայր նորա սատանայ է:

Հ. Աղաչեմ զքեզ հայր պատուական զի յուսուցես մեզ զորքան լինիլն դատաստանի:

Պ. Ասեմ քեզ զի ընդհանրական և առաքելական եկեղեցին զմի դաւանի ասելով թէ մարդոյս միանգամ մեռանիլ և յետ այնորիկ դատաստան. զայս կամի ասել սուրբ եկեղեցին թէ որպէս մարդոյս մի անգամ մահ, այսպէս և յարութիւն և դատաստան նոցա է մի և ո՛չ երկու:

Հ. Արդ Քրիստոս տէր և բարեխօսն մեր, զիտէ՞ր արդեօք զչարութիւն մնաց որ զսուտ և զանճոռնի յօրէնան հաստատէին, ապա թէ ոչ:

Պ. Այո՛ հայր պատուական ճշմարտապէս զիտէր, վասն այնորիկ թէ Ձգուշ լերութի չար մշակաց անտի և կամի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա, որք են սուտ և խաբէութեան աշակերտ են և ո՛չ իմոյ ճշմարտութեան. Որպէս և սուրբ եկեղեցին յայտնեաց ասելով:

Հ. Արդեօք տէրն մեր Քրիստոս զիտէ՞ր զօրն դատաստանի, ապա թէ ոչ:

Պ. Ձի հայրն երկնաւոր, աստուած ճշմարիտ, ո՛չ յայտնեաց զօրն այն որդոյն իւրում՝ սիրելոյ. որպէս և ասէ վասն կատարածի աշխարհի թէ ո՛չ որ զիտէ, ո՛չ հրեշտակք յերկինս և ո՛չ որդի, բայց միայն հայր. այլ ևս ասէ ես յանձնէ իմմէ ո՛չ խօսիմ, այլ զոր ինչ պատուէր ես

ինձ հայր իմ զայն խօսիմ. Տեսե՛ր նազելի իմ թէ Քրիստոս որդին աստուծոյ յանձնէ իւրմէ ոչ ինչ կարէր ասել եթէ ոչ հայր նորա յայտնէր նրմա:

Հ. Արդ որովհետեւ տէրն մեր Յիսուս Քրիստոս ո՛չ կարաց առանց հօրն պատուիրանի զիտել զօրն դատաստանի, ապա զիա՞րդ ոմանք ուրացողք ասեն և հակառակին ընդդէմ՝ ճշմարտութեան որդոյն աստուծոյ թէ զոյ առանձնական դատաստան և քարարան վասն մեղաւորաց:

Պ. Ձի նախ ասացի քեզ թէ նոքա են ժառանգ հօրն խաբէութեան, զոր հոգովն նոյն չարին միշտ և հանապազ զսուտ օրէնս և զսուտ պատուիրանս կարգեն: Տես սիրելի իմ՝ միշտ և հանապազ զսուտ օրէնս և զսուտ պատուիրանս կարգեն: Տես սիրելի իմ՝ զվարժապետն նոցա, որ կերպարանեցաւ ի կերպ կրօնաւորի և քարոզէր նոցա զտանջանս դժոխաց, առ ի որսալ զհոգիս նոցա»:²⁶

Հարց ու պատասխանի բովանդակությունն առկա է «Բանալի ճշմարտութեան» երկի արձակ շարադրանքի առանձին բաժիններում, իսկ այս հատվածներում նրանք առավել կոնկրետանում են, առավել հիշելի դառնալու միտումով:

Ֆ.Կոնիբերի հրատարակած «Բանալի ճշմարտութեան» երկվեզվյան բնագիրը (գրաբար, անգլերեն) բանասիրական շատ կարևոր ներդրում է հայագիտության մեջ, այն հայ հոգևոր ուսուցողական գրականության զիտական ձևով միջազգայնացնելու մեծարժեք դրսևորում է և ցարդ չի ենթարկվել հատուկ բանասիրական քննության:

Саакян П.

Английский перевод книги Оганеса Ереца Хнусеци ТКлюч истиныУ.

РЕЗЮМЕ

Знаменитый английский арменовед Ф.Конибер, в числе других арменоведческих исследований и переводов, 1898г. издал на английском языке теологическо - дидактическое пособие Ованеса Ереца Хнусеци Ключ истины, написанное в 1782г., в армянской провинции Тарон.

Арменовед Конибер научно истолковал перевод. В конце армянского подлинника поместил также свое примечательное мемориальное послесловие на грабаре. Труд Ованеса Ереца Хнусеци удостоился внимания Ф.Конибера благодаря своей исключительной познавательной ценности.

26). Նույն տեղում :